



ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՒ ԿԱՐԳԸ

Ցանկ

ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՒ ԿԱՐԳԸ	2
ՀՀՀ-ի հեղինակային իրաւունքը եւ սահմանափակ արտօնագիրը	2
Օն-լայն ծրագրի գործիքները, ուսման բովանդակութիւնը եւ դասաւանդումը	3
Ինքնութիւն եւ անձնական տուեալներ	4



ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՒ ԿԱՐԳԸ

ՀՀՀ-ն կը հանդիսանայ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան (ՀԲԸՄ)-ի սեփականութիւնը: Հայկական երեւութական Համալսարանի կայքէջի՝ www.avc-agbu.org պարունակութիւնը, ներառեալ Հայկական երեւութական Համալսարանի նշանակը, ծրագրերը, բնագիրները, գծագրութիւնները, նկարները, տեղեկութիւնները, տուեալները, ուսուցման ծրագրակազմը, փաստաթուղթերը, գիտարուեստը եւ այլ թղթածրարները կը պատկանին ՀԲԸՄ-ին հեղինակային իրաւունքով, ու այս ամէնը կը հանդիսանայ իրեն սեփականութիւնը եւ կը պաշտպանուին միջազգային հեղինակային իրաւունքով եւ այլ օրէնքներով:

Մասնակցելով ՀՀՀ-ի ուսումնական շրջանին որպէս ուսանող՝ Դուք հնարաւորութիւն եւ իրաւունք կ'ունենաք օգտուելու ՀՀՀ-ի ուսումնական ծրագիրէն, ուսման կառավարման համակարգէն եւ ծառայութիւններէն (յետոյ բոլորը միասին՝ դասընթացքի նիւթեր եւ ծառայութիւններ), որը հասանելի կ'ըլլայ www.avc-agbu.org կայքէջին մէջ: Կայքը օգտագործելու պայմանները կը կիրառուին ՀՀՀ-ի դասընթացքի նիւթերուն եւ ծառայութիւններուն մէջ մուտք գործելու եւ օգտուելու համար:

ԿԸ ԽՆԴՐԵՄ ՁԵԶՄԷ ՈՐ ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱՔ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՕԳՏԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՈՐՈՎՇԵՏԵՒ ԱՍՈՆՔ ԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԸ ՊԱՐՈՒՆԱԿԵՆ ՁԵՐ ՕՐԻՆԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒՆ, ԻՐԱՒՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՒՆ ԵՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ: ԴԱՌՆԱԼՈՎ ՈՒՍԱՆՈՂ՝ ԴՈՒՔ ՕՐԻՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿԸ ԿՆՔԷՔ ՀՀՀ-Ի ՀԵՏ ԵՒ ԿԸ ՀԱՄԱՁԱՅՆԻՔ ՀԵՏԵԻՒԼ ՈՒ ՊԱՀՊԱՆԵԼ ՆԱԽԱՏԵՍՈՒԱԾ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՒ ԿԱՐԳԸ, ԻՆՉՊԷՍ ՆԱԵՒ ՎԿԱՅԱԿՈՉՈՒԱԾ ԲՈԼՈՐ ԼՐԱՑՈՒՅԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ: ԵԹԷ ԴՈՒՔ ՀԱՄԱՁԱՅՆ ՉԷՔ ԱՅՍ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՆ, ԱՊԱ ՄԻ՛ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԻՔ ՀՀՀ-Ի ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐՈՒՆ:

ՀՀՀ-ի հեղինակային իրաւունքը եւ սահմանափակ արտօնագիրը

Որպէս ՀՀՀ-ի ուսանող Դուք կ'ունենաք սահմանափակ արտօնագիր: Առանց ենթաարտօնագիրին, Դուք իրաւունք կ' օգտուելու դասընթացքի նիւթերէն ու ՀՀՀ-ի ծառայութիւններէն միայն Ձեր ուսման համար եւ ոչ թէ առեւտրական եւ անձնական նպատակներով:

ՀՀՀ-ի ուսանողը դառնալու համար Դուք կը համաձայնիք՝

- չվերարտադրել, չվերավաճառել, չվարձել, չփոխանցել կամ առեւտրական նպատակներով չօգտագործել Դասընթացքի նիւթերը եւ ծառայութիւնները:
- չբաժնել Դասընթացքի նիւթերը եւ ծառայութիւնները:
- չհրատարակել Դասընթացքի նիւթերը եւ ծառայութիւնները:

- չստեղծել ածանցեալ ստեղծագործություններ՝ ուսուցման ծրագրակազմի հիման վրայ, ինչպես նաև չփոխել, չվերամշակել, չթարգմանել Դասընթացքի նիւթերը եւ ծառայությունները:
- չստեղծել կամ չփորձել ստեղծել Դասընթացքի նիւթերու եւ ծառայություններու միջոցով փոխարինող նիւթ, կամ նմանող արտադրանք, կամ ալ ծառայութիւն:

Սոյն պայմաններով, անթոյլատրուած Դասընթացքի նիւթերը եւ ծառայությունները ցանկացած օգտագործման կամ օգտագործման փորձի ժամանակ, ՀՀ-ն իր որոշումով կ'արգիլէ ուսանողին մուտքը Դասընթացքին մէջ:

Օն-լայն ծրագրի գործիքները, ուսման բովանդակությունը եւ դասաւանդումը

Ըլլալով ՀՀ-ի ուսանող, Դուք ձեռք կը բերէք անվերջ օգտագործելու օն-լայն ծրագրերու գործիքներ, որը իր մէջ կը պարունակէ՝ ֆօրըմը, չաթի սենեակները եւ հաղորդագրություններու վահանակը (այսուհետ՝ օն-լայն ծրագրի գործիքներ) ինչպէս նաև բացարձակ հնարաւորութիւն կ'ունենաք մուտք գործելու Ձեր եւ այլ ուսանողներուն կողմէ պատրաստուած տարածքը՝ բեռնաւորելով հաղորդագրությունները, նիւթերը, տուեալները, տեղեկությունները, գծագրությունները, նկարները, ձայնագրություններ, տեսագրություններ(յետոյ՝ Ուսման բովանդակություն):

Դուք պատասխանատու էք Օն-լայն ծրագրի գործիքները օգտագործելու համար եւ Դուք պէտք է հասկնաք, որ Ձեր կողմէ բեռնաւորուած եւ տեղադրուած ուսման բովանդակությունը կրնայ մատչելի ըլլալ նաև ուրիշին : ՀՀ-ը պատասխանատու չէ Ձեր կամ մէկ այլ ուսանողին կողմէ օն-լայն ծրագրի գործիքներու միջոցով Ուսման բովանդակությունը հասանելի դարձնելու:

ՀՀ-ն պարտաւոր չէ Ուսման բովանդակությունը ստուգելու եւ վերահսկելու համար: Ամէն պարագային, ՀՀ-ն իրաւունք ունի ցանկացած ժամանակ, որեւէ պատճառով կամ առանց պատճառի հանել կայքէջէն Ուսումնական բովանդակությունը՝ նախապէս ծանուցելով եւ բացատրություն տալով կամ առանց ծանուցելու եւ բացատրություն տալու:

Տեղադրելով կամ բեռնաւորելով Ուսման բովանդակությունը օն-լայն ծրագրի գործիքներու միջոցով՝ Դուք ՀՀ-ին կու տաք ոչ բացառիկ եւ հեղինակային վարձատրութիւն չպահանջող իրաւունք օգտագործելու, վերարտադրելու, հրապարակելու, թարգմանելու, փոխելու եւ անոնց ստեղծած ածանցեալ ստեղծագործությունները: Դուք համաձայն էք, որ Ձեր կողմէ օն-լայն ծրագրի գործիքներու միջոցով հասած ցանկացած Ուսման բովանդակությունը գաղտնի չէ: ՀՀ-ն իրաւունք ունի առանց տեղեկութիւն տալու Ձեզի, օգտագործել եւ տարածել Ուսման բովանդակությունը ցանկացած նպատակով, նոյնիսի առետուրի նպատակով:

Դուք համաձայն չէք օգտագործելու օն-լայն ծրագրի գործիքներ ստորեւ նշուած նպատակներով՝

- Առեւտրային, ներառեալ առանց սահմանափակումի՝ քաղաքական, քարոզարշաւներու, գովազդներու եւ միջնորդութիւններու կամ ունենալ ուսանողներուն ելեկտրոնային նամակները չցանկացած ելեկտրոնային նամակներ ուղարկելու նպատակով:
- Բեռնաւորելու, տեղադրելու կամ տարածելու ցանկացած Ուսման բովանդակութիւն, որը կրնայ փոխել ցանկացած հեղինակային իրաւունքներ, արտօնագրային իրաւունքներ, ապրանքային նշանի կամ այլ մտաւոր սեփականութեան կամ գոյքային իրաւունք:
- Բեռնաւորելու, տեղադրելու կամ տարածելու անօրինական, անհամեստ, անպարկէշտ կայքեր, սպառնական, վիրաւորական եւ անձնական կեանք ներխուժող Ուսման բովանդակութիւն:
- Բեռնաւորելու, տեղադրելու կամ տարածելու համակարգչային հիւանդութիւններ, վնասարար կամ քայքայիչ թղթապանակներ:
- Բեռնաւորելու, տեղադրելու կամ տարածելու Ուսման բովանդակութիւն, որը կ'առաջացնէ կամ կը դրդէ քրեօրէն պատժելի արարքի:

Դուք՝ որպէս ուսանող, պէտք է յարգալից վերաբերմունք ցոյց տաք Ձեր դասընկերներուն եւ օն-լայն ուսուցիչներուն՝ ինչպէս նշուած է Ուսանողի ուղեցոյցին մէջ:

ՀՀՀ-ն իրաւունք ունի իր իսկ հայեցողութեամբ կիրառել պատիժներ վերոյիշեալ օրէնքները խախտելու պարագային:

Ինքնութիւն եւ անձնական տուեալներ

Օգտուելով Դասընթացքի նիւթերէն եւ ծառայութիւններէն՝ Դուք համաձայն կ'ըլլաք՝

- Տրամադրելու ճիշդ եւ լիարժեք տեղեկութիւններ Ձեր ինքնութեան մասին թէ՛ արձանագրութեան դիմումը ամբողջացնելու ժամանակ, թէ՛ ՀՀՀ-ի եւ Ձեր դասընկերներուն հետ շփման ժամանակ:
- Միշտ նորոգել Ձեր եւ Ձեր անձի մասին ցանկացած տեղեկութիւնները:
- Պատասխանատու ըլլալ Ձեր հաշուի, կայքէջ մուտք գործելու եւ ծածկագիրի անվտանգութեան համար:

Դուք պէտք է չափահաս ըլլաք Դասընթացքի նիւթերէն եւ ծառայութիւններէն օգտուելու եւ պայմանագիր կնքելու համար: Իսկ եթէ անչափահաս ըլլաք, ապա Ձեր ծնողքը պէտք է ամբողջացնէ եւ ստորագրէ արձանագրութեան դիմումը: